

հ.64701

30-09-2020թ.

Նախընտրած ծանուցման ձևը՝

Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱՐՆԴԱՆԵ ՍՊԸ*

Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՐՈՒՆԻ, ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ Փ., 12/7,*

sales@arndane.com : +37433403405

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի Անդրեյ Դուկասյան Իմ անունը Արմինե Է: Ներկայացնում եմ Արնդանե ՍՊԸ-ն: Աշխատելով որպես վաճառքների գծով մենեջեր-օպերատոր՝ հաայցում Ձեր աջակցությունը Լոռու մարզում գործող կենդանաբուժական ֆաբրիկաների, ֆերմաների և անհատ ֆերմերների կոնտակտային տվյալների հայտնաբերման գործընթացում, վերջիններիս հետ կապ հաստատելու և մեր Ընկերության արտադրանքը և ծառայությունները առաջարկելու և նրանց հետ համագործակցելու նպատակով: Միաժամանակ թույլ տվեք հակիրճ ներկայացնել մեր ընկերությունը: Մեր ընկերությունը Հայաստանյան շուկայի առաջատարներից է: Արնդանե ՍՊԸ-ն ավելի քան 12 տարի է աշխատանքներ է իրականացնում հայաստանյան գյուղատնտեսական ոլորտում և մեր նպատակն է սպառողների համար շուկա հասցնել բարձր որակի կենսաբանորեն մաքուր հումք: Այդ տարիների ընթացքում մեր ընկերությունը ներկայացել է որպես հուսալի գործընկեր տավարաբուժական, թռչնաբուժական, խոզաբուժական և կենդանաբուժական այլ բնագավառներում: Մեր ընկերության նպատակն է ապահովել՝ • բարձր որակի կերերի մատակարարում • ճիշտ պահեստավորում • անվնաս և ապահով տեղափոխում • սպառողների բիզնեսի եկամտաբերության բարձրացում Ընկերությունը սպառողներին է մատակարարում սպիտակուցային, հատիկային, խտացված կերեր՝ բովոլ խոզերի, բովոլ ցուլիկների, ածան և բրոյլեր հավերի, 1-21 և 21-60 օրական ածան հավի ճտի համար, ինչպես նաև կոնցենտրատներ, անփոխարինելի ամինաթթուներ, վիտամինային հավելումներ և այլն: Ընկերությունն իր տեսականու մեջ ունի նաև անասնաբուժական դեղորայք՝ • հակաբիոտիկներ • վիտամինային պրեպարատներ • հակաճիճվային միջոցներ • կենդանիների լողացման ինսեկտիցիդ միջոցներ • վակցինաներ տարբեր բնույթի հիվանդությունների դիմաց Ընկերությունն ունի պատրաստված մասնագետներ, ովքեր, անհրաժեշտության դեպքում, կարող են տալ անվճար մասնագիտական խորհրդատվություն կերակրման նորմաների, անասնաբուժական միջոցառումների պլանավորման և ճիշտ իրականացման մասին: Շուկայում իր գնային ճկուն քաղաքականության շնորհիվ, մեր ընկերությունը թույլ է տալիս հավատարիմ գնորդներին իրենց բիզնեսը դարձնել ավելի եկամտաբեր: Հավելենք նաև, որ յուրաքանչյուր գնորդի ցուցաբերվում է անհատական մոտեցում: Հարգանքով՝ Արմինե Գասպարյան Վաճառքի գծով մենեջեր-օպերատոր Արնդանե ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 01561662, կայք՝ <http://www.arndane.com>) Հեռ.՝ +374 33 403405

Էլ.հասցե՝ sales@arndane.com

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԱՐՄԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ